

Ծրագրի փ ծրագրին դիմելու ուղեցույց

Խմբագրվել է՝ 09/8/23

Lendistry-ն կառավարում է դրամաշնորհային ծրագրեր երրորդ կողմի(կողմերի) անունից և չի որոշում ծրագրի շրջանակը, իրավունակության չափանիշները, հաղորդակցման ռազմավարությունը կամ ժամկետները: Դրանք սահմանվում են դրամաշնորհային ծրագրեր առաջարկող երրորդ կողմի(կողմերի) կողմից: Տեղեկատու նյութերում նշված բոլոր տեղեկությունները ենթակա են փոփոխման:



CALIFORNIA

Small Agricultural Business
Drought and Flood Relief Grant

APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

1. Ծրագրի շրջանակներում տրամադրվում է սահմանափակ ֆինանսավորում, և հնարավոր է, որ իրավունակության պահանջները բավարարող հայտատուների թիվը գերազանցի հասանելի միջոցները: Դիմումներ կայացնելը, իրավունակության պահանջները բավարարելը և/կամ դրամաշնորհի հաստատման ստացումը չի երաշխավորում, որ դուք կստանաք ֆինանսավորում:
2. Դուք պետք է ձեր դիմումը ներկայացնեք ոչ ուշ, քան՝ (i) դիմումի ներկայացման մեկնարկից հետո երեսուն (30) օրվա ընթացքում, կամ (ii) մինչև Lendistry-ի կողմից հայտարարված դիմումի ներկայացման ժամանակահատվածի փակման ամսաթիվը: Եթե ձեր դիմումը չներկայացվի մինչև վերը նշված կիրառելի վերջնաժամկետը, այն կհամարվի «ոչ ակտիվ» և չի մասնակցի դիմումի քննարկման գործընթացին:

Այս Ծրագրի շրջանակներում ցանկացած բիզնես (և շահույթ չհետապնդող կազմակերպություն) կարող է դիմել* և ստանալ երաշտի հետ կապված մինչև մեկ դրամաշնորհ ԵՎ մեկ դրամաշնորհ՝ կապված փոթորկի պատճառով հեղեղումներ հետ, նույնիսկ եթե ունի մի քանի բիզնես ձեռնարկություններ, ֆրանշիզաներ և/կամ գտնվելու վայրեր:

Դիմում ներկայացնող բիզնեսի ոչ մի սեփականատեր (կամ դիմում ներկայացնող շահույթ չհետապնդող կազմակերպության գործադիր տնօրեն կամ նմանատիպ գործառույթ իրականացնող ավագ ղեկավար) չի կարող դիմել կամ ստանալ երաշտի հետ կապված դրամաշնորհ Ծրագրի շրջանակներում որևէ այլ բիզնեսի (կամ շահույթ չհետապնդող կազմակերպության) անունից, որի սեփականատերն է ինքը (կամ հանդիսանում է գործադիր տնօրենը կամ նմանատիպ գործառույթ իրականացնող ավագ ղեկավար): Եթե մեկ բիզնեսին (կամ շահույթ չհետապնդող կազմակերպությանը) կամ ընդհանուր սեփականություն հանդիսացող մի քանի բիզնեսներին (կամ ընդհանուր գործադիր տնօրեն կամ համարժեք ավագ ղեկավարներով մի քանի շահույթ չհետապնդող կազմակերպություններին) տրվում է երաշտի հետ կապված երկրորդ դրամաշնորհը, Ծրագրի բոլոր դրամաշնորհները, որոնք տրամադրվել են այդ բիզնեսին (կամ շահույթ չհետապնդող կազմակերպությանը), ներառյալ հեղեղումների հետ կապված ցանկացած դրամաշնորհ, չեղյալ կհամարվեն:

*Եթե բիզնեսին (կամ շահույթ չհետապնդող կազմակերպությանը) մերժել են դրամաշնորհ տրամադրել Ծրագրի՝ երաշտի հետ կապված դրամաշնորհների մի խմբի շրջանակներում, բիզնեսը կարող է դիմել Ծրագրի՝ երաշտի հետ կապված երկրորդ խմբի դրամաշնորհի համար, որի համար այն բավարարում է իրավունակության բոլոր պահանջները:

Կալիֆոռնիայում երաշտից և հեղեղումներից տուժած փոքր գյուղատնտեսական բիզնեսին օգնության դրամաշնորհային ծրագիրը օգնություն կտրամադրի փոքր գյուղատնտեսական բիզնեսներին, որոնք ունեցել են տարեկան համախառն եկամտի կամ համախառն շահույթի անկում երաշտի կամ փոթորկի պատճառով հեղեղումների հետևանքով:

Նախքան դրամաշնորհի վերաբերյալ որոշման կայացումը՝ սահմանված չափանիշներին համապատասխանող շահույթ չհետապնդող կազմակերպությունները պետք է գրանցվեն Արդարադատության նախարարությունում և գրանցված մասն` մինչև դրամաշնորհի վերաբերյալ համաձայնագրի կնքումը:

<p>Երաշտից տուժածների 1-ին խումբ <u>Սեղմեք այստեղ՝ ավելին</u> <u>իմանալու համար</u></p>	<p>Հատկացվում է փոքր \$երմաներին և սոցիալապես խոցելի \$երմերներին, որոնք սահմանված չափանիշներին համապատասխանող փոքր գյուղատնտեսական բիզնեսներ են կամ շահույթ չհետապնդող կազմակերպություններ, որոնց տարեկան համախառն եկամուտը կամ համախառն շահույթը նվազել է 10% կամ ավելի տոկոսով, եթե համեմատենք 2022 հարկային տարին 2019 հարկային տարվա հետ:</p>
<p>Երաշտից տուժածների 2-րդ խումբ <u>Սեղմեք այստեղ՝ ավելին</u> <u>իմանալու համար</u></p>	<p>Հատկացվում է սահմանված չափանիշներին համապատասխանող փոքր գյուղատնտեսական բիզնեսներին կամ շահույթ չհետապնդող կազմակերպություններին, ա) որոնց տարեկան համախառն եկամուտը կամ համախառն շահույթը նվազել է 30% կամ ավելի տոկոսով, եթե համեմատենք 2022 հարկային տարին 2019 հարկային տարվա հետ, և բ) որոնք ներկայացված են 2022 NAICS կամ NTEE ցանկացած կոդով, որով նշվում են սաստիկ երաշտի պատճառով ամենաշատը տուժած ոլորտները: Դրանք ներկայացված են այստեղ:</p>
<p>Երաշտից տուժածների 3-րդ խումբ <u>Սեղմեք այստեղ՝ ավելին</u> <u>իմանալու համար</u></p>	<p>Հատկացվում է փոքր գյուղատնտեսական բիզնեսներին կամ շահույթ չհետապնդող կազմակերպություններին, ա) որոնց տարեկան համախառն եկամուտը կամ համախառն շահույթը նվազել է 10% կամ ավելի տոկոսով, եթե համեմատենք 2022 հարկային տարին 2019 հարկային տարվա հետ, և բ) որոնք չեն ներկայացնում իրենց 2022 հարկային տարվա հայտարարագրերը մինչև 2024 թվականը:</p>
<p>Փոթորկի պատճառով հեղեղումներից տուժածների 1-ին խումբ <u>Սեղմեք այստեղ՝ ավելին</u> <u>իմանալու համար</u></p>	<p>Հատկացվում է սահմանված չափանիշներին համապատասխանող փոքր գյուղատնտեսական բիզնեսներին կամ շահույթ չհետապնդող կազմակերպություններին, որոնք տուժել են հեղեղումներից, ներառյալ, բայց չսահմանափակվելով, այն կազմակերպությունները, որոնք նշված են 2022 թվականի Հյուսիսամերիկյան արդյունաբերության դասակարգման համակարգի կոդերով: Դրանք ներկայացված են այստեղ:</p>

«Սահմանված չափանիշներին համապատասխանող փոքր բիզնես կամ շահույթ չհետապնդող կազմակերպություն» նշանակում է բիզնես, որը համապատասխանում է հետևյալ **բոլոր** չափանիշներին.

1. Հանդիսանում է անհատ ձեռնարկատեր, անկախ կապալառու, C-կորպորացիա, S-կորպորացիա, կոոպերատիվ, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, գործընկերություն, շահույթ չհետապնդող (բացի 501(c)(4) կազմակերպությունից) կազմակերպություն կամ սահմանափակ գործընկերություն:
2. Ունեցել է 100 կամ ավելի քիչ լրիվ դրույթով աշխատող 2022 հարկային տարում և կունենա 100 կամ ավելի քիչ լրիվ դրույթով աշխատող 2023 հարկային տարում: Սեզոնային աշխատողները ներառված են լրիվ դրույթով աշխատողների թվի մեջ:
3. Գտնվում է Կալիֆոռնիա նահանգում:
4. Նահանգում սկսել է գործել մինչև 2020 թվականի հունվարի 1-ը:
5. Ներկայումս ակտիվ է և գործում է:

6. Համարվում է սաստիկ տուժած երաշտի հետևանքով՝ ըստ D2 կամ երաշտի ավելի բարձր դասակարգման՝ հիմնված ԱՄՆ Գյուղատնտեսության Նախարարության (USDA) երաշտի մոնիթորինգի մեթոդաբանության վրա (**միայն երաշտից տուժածների ծրագրի հայտատուների համար**), տեղակայված է կամ սպասարկում է իրականացնում այնպիսի վարչաշրջանում, որը նահանգի կամ դաշնության կողմից հայտարարվել է որպես հեղեղումներից տուժած գոտի (**միայն հեղեղումներից տուժածների ծրագրի հայտատուների համար**):
7. Տրամադրում է կազմակերպչական փաստաթղթեր, ներառյալ դաշնային հարկային հայտարարագիրը կամ Ներքին եկամուտների ծառայության 990 ձևը, ինչպես նաև պետքարտուղարին կամ տեղական համայնքապետարան ներկայացվող պաշտոնական փաստաթղթերի պատճենը, ըստ անհրաժեշտության, այդ թվում, բայց չսահմանափակվելով, ընկերության կանոնադրությունը, կազմակերպության վկայականը, գրանցված ֆիկտիվ անվանումը կամ կառավարության կողմից տրված բիզնեսի լիցենզիան:

Ծրագրի շրջանակներում տրամադրված դրամաշնորհի գումարը պետք է օգտագործվի միայն երաշտից կամ հեղեղումներից տուժած բիզնեսի պահպանման ծախսերի համար, որոնց մեջ մտնում են՝

1. Աշխատողների ծախսերը՝ ներառյալ աշխատավարձի ծախսերը, առողջապահական նպաստները, հիվանդության, առողջական կամ ընտանեկան հանգամանքներով պայմանավորված վճարվող արձակուրդը և ապահովագրավճարները:
2. Շրջանառու կապիտալը և վերադիր ծախսերը, այդ թվում՝ վարձավճարը, կոմունալ ծառայությունները, հիփոթեքի մայր գումարը և տոկոսավճարները, բայց բացառելով հիփոթեքային վարկի կանխավճարները և պարտքային պարտավորությունները՝ ներառյալ մայր գումարը և տոկոսները, որոնք ծագել են մինչև հեղեղումները կամ սաստիկ երաշտի սկսվելը:
3. Երաշտի կամ հեղեղումների հետ կապված ցանկացած այլ ծախս, որը դեռ չի փոխհատուցվել դրամաշնորհների, չվերադարձվող վարկերի կամ նահանգային, շրջանային կամ քաղաքային այլ օգնության ծրագրերի միջոցով:

«Սահմանված չափանիշներին համապատասխանող փոքր բիզնեսը կամ շահույթ չհետապնդող կազմակերպությունը» չի ենթադրում նշվածներից որևէ մեկը՝

1. Նահանգում ֆիզիկական ներկայություն չունեցող բիզնեսներ կամ շահույթ չհետապնդող կազմակերպություններ:
2. Պետական սուբյեկտներ, բացի բնիկ ամերիկյան ցեղերից, կամ պաշտոնական ընտրական շտաբեր:
3. Այն բիզնեսները կամ շահույթ չհետապնդող կազմակերպությունները, որոնք հիմնականում զբաղվում են քաղաքական կամ լոբբիստական գործունեությամբ, անկախ նրանից՝ կազմակերպությունը գրանցված է որպես 501(c)(3), 501(c)(6), կամ 501(c)(19) անվանակարգերի շահույթ չհետապնդող կազմակերպություն թե այլ շահույթ չհետապնդող կազմակերպություն:
4. Պասիվ բիզնեսներ կամ շահույթ չհետապնդող կազմակերպություններ, ներդրումային ընկերություններ ու ներդրողներ, որոնք ներկայացնում են E հավելվածի ձևն իրենց հարկային հայտարարագրերում:
5. Ֆինանսական հաստատություններ կամ բիզնեսներ կամ շահույթ չհետապնդող կազմակերպություններ, որոնք հիմնականում զբաղվում են վարկավորման բիզնեսով, օրինակ՝ բանկերը, ֆինանսական ընկերությունները և ֆակտորինգային ընկերությունները:
6. Այն բիզնեսները կամ շահույթ չհետապնդող կազմակերպությունները, որոնք զբաղվում են ցանկացած գործունեությամբ, որն անօրինական է՝ համաձայն դաշնային, նահանգային կամ տեղական օրենսդրության:
7. Բիզնեսներ կամ շահույթ չհետապնդող կազմակերպություններ, որոնք սահմանափակում են հովանավորչությունը հնարավորությունից բացի ցանկացած այլ պատճառով:

8. Կասկածելի բիզնեսներ կամ շահույթ չհետապնդող կազմակերպություններ:
9. Բիզնեսներ, որոնց սեփականատիրոջ կապիտալի մասնաբաժինը կազմում է 10 տոկոսից ավելի կամ, շահույթ չհետապնդող կազմակերպություններ, որոնց ցանկացած պաշտոնական ներկայացուցիչ կամ խորհրդի անդամ համապատասխանում է հետևյալ չափորոշիչներից մեկին կամ մի քանիսին (այս պահանջի նպատակների համար ֆինանսական գործակալը շահույթ չհետապնդող կազմակերպության հայտատուի դեպքում պետք է դիմի ցանկացած պաշտոնական ներկայացուցիչ, տնօրենի կամ խորհրդի անդամի).
 - Բիզնեսի սեփականատերը կամ շահույթ չհետապնդող կազմակերպության պաշտոնական ներկայացուցիչը կամ խորհրդի անդամը նախորդ երեք տարիների ընթացքում դատապարտվել է, կամ սեփականատիրոջ դեմ կայացվել է քաղաքացիական դատավճիռ, կամ նրա նկատմամբ սկսվել է պայմանական վաղաժամկետ ազատման կամ փորձաշրջանի որևէ ձև, այդ թվում՝ մինչև դատավճիռը փորձաշրջան՝ խարդախության կամ թրեական հանցագործության համար՝ կապված դաշնային, նահանգային կամ տեղական հանրային գործարք կամ պայմանագիր կնքելու, կնքելու փորձի կամ հանրային գործարքի շրջանակներում դաշնային կամ նահանգային հակամենաշնորհային կամ գնումների կանոնադրության խախտման կամ յուրացման, գողության, կեղծիքի, կաշառակերության, փաստաթղթերի կեղծման կամ ոչնչացման, կեղծ տվյալների ներկայացման կամ գողացված գույք ձեռք բերելու հետ:
 - Բիզնեսի սեփականատերը կամ շահույթ չհետապնդող կազմակերպության պաշտոնական ներկայացուցիչը կամ խորհրդի անդամը դաշնային, նահանգային կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ներկայումս մեղադրվում է կամ այլ կերպ նրա դեմ թրեական կամ քաղաքացիական մեղադրանք է առաջադրվել՝ վերը նշված հանցագործություններից որևէ մեկի կատարման համար:

Շարունակությունը՝ հաջորդ էջում:

11. Փոխկապակցված ընկերություններ, ինչպես նկարագրված է Դաշնային կանոնակարգերի օրենսգրքի 13-րդ գլխի 121.103 բաժնում, 2022 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ:

12. Բիզնեսներ կամ շահույթ չհետապնդող կազմակերպություններ, որոնք նախկինում ստացել են դրամաշնորհ սույն Ծրագրի շրջանակներում: Սույն Ծրագրի շրջանակներում բիզնեսները և շահույթ չհետապնդող կազմակերպությունները կարող են դիմել և ստանալ մինչև մեկ դրամաշնորհ՝ կապված երաշտի ազդեցության ԵՎ մեկ դրամաշնորհ՝ կապված հեղեղումների ազդեցության հետ:

Երաշտից տուժածների 1-ին խմբի մասին տեղեկություններ



CALIFORNIA

Small Agricultural Business
Drought and Flood Relief Grant

APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

Երաշտից տուժածների 1-ին խմբի մեջ մտնում են «**փոքր \$երմերային տնտեսությունները և սոցիալապես խոցելի \$երմերները**», որոնք համապատասխանում են հետևյալ բոլոր չափանիշներին՝

1. Հանդիսանում են սահմանված չափանիշներին համապատասխանող փոքր բիզնես կամ շահույթ չհետապնդող կազմակերպություն, ինչպես նշված է [այստեղ](#):
2. Ունեն սեփականատեր, կամ շահույթ չհետապնդող կազմակերպության դեպքում՝ լիազորված անձ, ով ներկայացնում է դիմումը և առնվազն 18 տարեկան է:
3. Ունեցել են տարեկան համախառն եկամտի կամ համախառն շահույթի **10% կամ ավելի** տոկոս անկում, եթե համեմատենք 2022 հարկային տարին 2019 թվականի հարկային տարվա հետ:
4. 2019 թվականին \$երմերային տնտեսությունից ունեցել են \$1 000-ից ոչ պակաս, բայց \$350 000-ից պակաս համախառն կանխիկ եկամուտ (F հավելվածի 9-րդ տողը (Ձև 1040)):
5. 2022 թվականին վաստակել են \$350 000-ից պակաս F հավելվածի 9-րդ տողը (Ձև 1040)):
6. Համարվում են այնպիսի խումբ, որի անդամները ռասայական, էթնիկական կամ գենդերային կողմնակալության են ենթարկվել՝ այս կամ այն խմբին պատկանելու պատճառով՝ հաշվի չառնելով նրանց անհատական որակները:

«**Փոքր \$երման**» ունի այն նշանակությունը, որը նկարագրված է 2013 թ. ապրիլի [ERS \\$երմայի տիպաբանության](#) խմբագրված հրապարակման մեջ, որը թողարկվել է Միացյալ Նահանգների գյուղատնտեսության նախարարության տնտեսական հետազոտությունների ծառայության կողմից:

- «**Սոցիալապես խոցելի \$երմեր**» ունի այն նշանակությունը, որը նկարագրված է Պարենի և գյուղատնտեսական արտադրության մասին օրենսգրքի 512-րդ բաժնի [ը ենթաբաժնում](#) 2022 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ:
 - «**Սոցիալապես խոցելի \$երմեր կամ ազարակատեր**» նշանակում է \$երմեր կամ ազարակատեր, ով սոցիալապես ոչ բարենպաստ վիճակում գտնվող խմբի մեջ է մտնում:

1-ին խմբի համար նախատեսված միջոցները կբաշխվեն պահանջներին համապատասխանող հայտատուներին հետևյալ կերպ՝

Ֆերմերային տնտեսության համախառն կանխիկ եկամուտների անկում	Նախատեսված դրամաշնորհի գումարի չափը
10%-ից շատ կամ հավասար, բայց 30%-ից պակաս	\$20 000
30%-ից շատ կամ հավասար, բայց 40%-ից պակաս	\$60 000
40%-ից շատ կամ հավասար, բայց 50%-ից պակաս	\$80 000
50%-ից շատ կամ հավասար	\$100 000

Սույն ծրագրի երաշտից տուժածների 1-ին խմբում ընդգրկվելու համար պահանջվում են հետևյալ փաստաթղթերը՝

1. Հայտատուի հավաստագրեր

- Լրացրեք և վերբեռնեք Հայտատուի հավաստագրերը, որոնք կիրառելի են միայն ձեր բիզնեսի/կազմակերպության համար:

2. Կառավարության կողմից տրված լուսանկարով ընդունելի ID՝ վերբեռնված Persona-ի միջոցով, որը ներառված կլինի դիմումում:

3. Պաշտոնական դիմում Կալիֆոռնիայի պետքարտուղարին (որը պետք է ակտիվ լինի) կամ տեղական համայնքապետարան, ըստ անհրաժեշտության, ձեր բիզնեսի կամ կազմակերպության մասին տեղեկություններով, օրինակ՝ հետևյալ փաստաթղթերից մեկով՝

- Ընկերության կանոնադրություն,
- Կազմակերպության վկայական,
- Կազմակերպության գրանցված ֆիկտիվ անվանում,
- Մասնագիտական գործունեությամբ զբաղվելու լիցենզիա,
- Կառավարության կողմից տրված բիզնեսի լիցենզիա կամ թույլտվություն:

4. Հարկերից ազատման կարգավիճակի ապացույց (պահանջվում է միայն շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար)

5. 2022 և 2019 թթ. լրացված, անփոփոխ 7 ներկայացված դաշնային հարկային հայտարարագրեր կամ IRS ձև 990

6. Աշխատակիցների թվի ապացույց. 2022 թվականի IRS ձև W-3 կամ աշխատավարձի հաշվետվություններ

Այս ցանկը սպառնիչ չէ: Lendistry-ն կարող է կապ հաստատել ձեզ հետ Էլեկտրոնային փոստով, հեռախոսով և/կամ տեքստային հաղորդագրությամբ (թույլտվության առկայության դեպքում)՝ պահանջելու լրացուցիչ փաստաթղթեր՝ ձեր դիմումում ներկայացված տեղեկությունները ստուգելու համար:

Երաշտից տուժածների 2-րդ խմբի մասին տեղեկություններ



CALIFORNIA

Small Agricultural Business
Drought and Flood Relief Grant

APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

Երաշտից տուժածների 2-րդ խմբի մեջ մտնում են այն հայտատուները, ովքեր համապատասխանում են հետևյալ բոլոր չափանիշներին՝

1. Հանդիսանում են սահմանված չափանիշներին համապատասխանող փոքր բիզնես կամ շահույթ չհետապնդող կազմակերպություն, ինչպես նշված է [այստեղ](#):
2. Ունեն սեփականատեր, կամ շահույթ չհետապնդող կազմակերպության դեպքում՝ լիազորված անձ, ով ներկայացնում է դիմումը և առնվազն 18 տարեկան է:
3. Ունեցել են տարեկան համախառն եկամտի կամ համախառն շահույթի **30% կամ ավելի** տոկոս անկում, եթե համեմատենք 2022 հարկային տարին 2019 թվականի հարկային տարվա հետ:

4. Գործում են Հյուսիսամերիկյան արդյունաբերության դասակարգման համակարգի (NAICS) կամ Հարկերից ազատված սուբյեկտների ազգային դասակարգման (NTEE) 2022 թվականին սահմանված հետևյալ կոդերից մեկի ներքո, որոնցով նշվում են սաստիկ երաշտի հետևանքով առավել տուժած ոլորտները՝

- NAICS ծածկագրերը սկսվում են 111-ով – Բուսաբուծության ենթաօլորտ
- NAICS 424910 - Farm Supplies Merchant Wholesalers
- NAICS 444240 - տնկարանների, այգիների կենտրոնի և ֆերմայի մատակարարման մանրածախ առևտուր
- NAICS 312130 – Գինեգործական գործարաններ
- NAICS 424480 – Թարմ մրգերի և բանջարեղենի մեծածախ առևտրականներ
- NAICS կոդեր, որոնք սկսվում են 115-ով - Գյուղատնտեսության և անտառտնտեսության ոլորտում աջակցման գործունեություն
- NAICS կոդեր, որոնք սկսվում են 311-ով - Սննդի արտադրություն
- NAICS կոդեր, որոնք սկսվում են 1121-ով - Անասնաբուծություն և հողագործություն
- NAICS 424910 - Գյուղատնտեսական ապրանքների մեծածախ վաճառողներ
- NAICS 444240 - Բուծարանների, այգիների կենտրոնների և ֆերմերային տնտեսությունների ապրանքների մանրածախ վաճառողներ
- NAICS 484220 - Մասնագիտացված բեռների (բացի օգտագործված ապրանքներից) փոխադրումներ, տեղական (տեղական գյուղատնտեսական ապրանքների բեռնափոխադրումներ)
- NTEE D99 - Այլ դասերում չդասակարգված կենդանիների հետ կապված գործունեություն
- NTEE K02 - Կառավարում և տեխնիկական օգնություն
- NTEE K03 - Մասնագիտական միություններ և ասոցիացիաներ
- NTEE K20 - Գյուղատնտեսական ծրագրեր
- NTEE K25 - Գյուղատնտեսական հողերի պահպանում
- NTEE K26 - Անասնաբուծություն
- NTEE K2A - Այլ բանջարեղեն (բացի կարտոֆիլից) և սեխի մշակում
- NTEE K2B - Հող, նախապատրաստում, տնկում և մշակում
- NTEE K2C - Գինեգործարաններ
- NTEE K93 - Մրգերի և բանջարեղենի շուկաներ
- NTEE K99 - Այլ դասերում չդասակարգված սննդի, գյուղատնտեսության և կերի հետ կապված գործունեություն

Դրամաշնորհներ երաշտից տուժածների 2-րդ խմբի համար

2-րդ խմբի համար նախատեսված միջոցները կբաշխվեն պահանջներին համապատասխանող հայտատուներին հետևյալ կերպ՝

Համախառն եկամուտների կամ համախառն շահույթի անկում	Նախատեսված դրամաշնորհի գումարի չափը
30%-ից շատ կամ հավասար, բայց 40%-ից պակաս	\$60 000
40%-ից շատ կամ հավասար, բայց 50%-ից պակաս	\$80 000
50%-ից շատ կամ հավասար	\$100 000

Սույն ծրագրի երաշտից տուժածների 2-րդ խմբում ընդգրկվելու համար պահանջվում են հետևյալ փաստաթղթերը՝

1. Հայտատուի հավաստագրեր

- Լրացրեք և վերբեռնեք Հայտատուի հավաստագրերը, որոնք կիրառելի են միայն ձեր բիզնեսի/կազմակերպության համար:

2. Կառավարության կողմից տրված լուսանկարով ընդունելի ID՝ վերբեռնված Persona-ի միջոցով, որը ներառված կլինի դիմումում:

3. Պաշտոնական դիմում Կալիֆոռնիայի պետքարտուղարին (որը պետք է ակտիվ լինի) կամ տեղական համայնքապետարան, ըստ անհրաժեշտության, ձեր բիզնեսի կամ կազմակերպության մասին տեղեկություններով, օրինակ՝ հետևյալ փաստաթղթերից մեկով՝

- Ընկերության կանոնադրություն,
- Կազմակերպության վկայական,
- Կազմակերպության գրանցված ֆիկտիվ անվանում,
- Մասնագիտական գործունեությամբ զբաղվելու լիցենզիա,
- Կառավարության կողմից տրված բիզնեսի լիցենզիա կամ թույլտվություն

4. Հարկերից ազատման կարգավիճակի ապացույց (պահանջվում է միայն շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար)

5. 2022 և 2019 թթ. լրացված, անփոփոխ և ներկայացված դաշնային հարկային հայտարարագրեր կամ IRS ձև 990

6. Աշխատակիցների թվի ապացույց. 2022 թվականի IRS ձև W-3 կամ աշխատավարձի հաշվետվություններ

Այս ցանկը սպառնիչ չէ: Lendistry-ն կարող է կապ հաստատել ձեզ հետ էլեկտրոնային փոստով, հեռախոսով և/կամ տեքստային հաղորդագրությամբ (թույլտվության առկայության դեպքում)՝ պահանջելու լրացուցիչ փաստաթղթեր՝ ձեր դիմումում ներկայացված տեղեկությունները ստուգելու համար:

Չեղեղումներից տուժածների 1-ին խմբի մասին տեղեկություններ



CALIFORNIA

Small Agricultural Business
Drought and Flood Relief Grant

APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

Հեղեղումներից տուժածների 1-ին խմբի մեջ մտնում են այն հայտատուները, ովքեր համապատասխանում են հետևյալ բոլոր չափանիշներին՝

1. Հանդիսանում են սահմանված չափանիշներին համապատասխանող փոքր բիզնես կամ շահույթ չհետապնդող կազմակերպություն, ինչպես նշված է [այստեղ](#):
2. Ունեն սեփականատեր, կամ շահույթ չհետապնդող կազմակերպության դեպքում՝ լիազորված անձ, ով ներկայացնում է դիմումը և առնվազն 18 տարեկան է:

3. Գործում են Հյուսիսամերիկյան արդյունաբերության դասակարգման համակարգի (NAICS) կամ Հարկերից ազատված սուբյեկտների ազգային դասակարգման (NTEE) 2022 թվականին սահմանված հետևյալ կոդերից մեկի ներքո, որոնցով նշվում են սաստիկ երաշտի հետևանքով առավել տուժած ոլորտները՝

- NAICS ծածկագրերը սկսվում են 111-ով – Բուսաբուծության ենթաօլորտ
- NAICS 424910 - Farm Supplies Merchant Wholesalers
- NAICS 444240 - տնկարանների, այգիների կենտրոնի և ֆերմայի մատակարարման մանրածախ առևտուր
- NAICS 312130 – Գինեգործական գործարաններ
- NAICS 424480 – Թարմ մրգերի և բանջարեղենի մեծածախ առևտրականներ
- NAICS կոդեր, որոնք սկսվում են 115-ով - Գյուղատնտեսության և անտառտնտեսության ոլորտում աջակցման գործունեություն
- NAICS կոդեր, որոնք սկսվում են 311-ով - Սննդի արտադրություն
- NAICS կոդեր, որոնք սկսվում են 1121-ով - Անասնաբուծություն և հողագործություն
- NAICS 424910 - Գյուղատնտեսական ապրանքների մեծածախ վաճառողներ
- NAICS 444240 - Բուծարանների, այգիների կենտրոնների և ֆերմերային տնտեսությունների ապրանքների մանրածախ վաճառողներ
- NAICS 484220 - Մասնագիտացված բեռների (բացի օգտագործված ապրանքներից) փոխադրումներ, տեղական (տեղական գյուղատնտեսական ապրանքների բեռնափոխադրումներ)
- NTEE D99 - Այլ դասերում չդասակարգված կենդանիների հետ կապված գործունեություն
- NTEE K02 - Կառավարում և տեխնիկական օգնություն
- NTEE K03 - Մասնագիտական միություններ և ասոցիացիաներ
- NTEE K20 - Գյուղատնտեսական ծրագրեր
- NTEE K25 - Գյուղատնտեսական հողերի պահպանում
- NTEE K26 - Անասնաբուծություն
- NTEE K2A - Այլ բանջարեղեն (բացի կարտոֆիլից) և սեխի մշակում
- NTEE K2B - Հող, նախապատրաստում, տնկում և մշակում
- NTEE K2C - Գինեգործարաններ
- NTEE K93 - Մրգերի և բանջարեղենի շուկաներ
- NTEE K99 - Այլ դասերում չդասակարգված սննդի, գյուղատնտեսության և կերի հետ կապված գործունեություն

Կախված հայտատուի կողմից տրամադրված 2022 հարկային տարում բիզնեսի դաշնային հարկային հայտարարագրերում ներկայացված հասույթի մակարդակից՝ սահմանված չափանիշներին համապատասխանող փոքր գյուղատնտեսական ձեռնարկությունների համար սահմանվում են դրամաշնորհների գումարների երեք մակարդակներ, որոնք բաշխվում են պահանջներին համապատասխանող հայտատուների միջև հետևյալ կերպ՝

Տարեկան համախառն եկամուտ	Նախատեսված դրամաշնորհի գումարի չափը
\$350 000-ից պակաս	\$25 000
\$350 000-ից շատ կամ հավասար, բայց \$750 000 պակաս	\$75 000
\$750 000-ից շատ կամ հավասար, բայց \$2 000 000-ից պակաս	\$100 000

Սույն ծրագրի հեղեղումներից տուժածների 1-ին խմբում ընդգրկվելու համար պահանջվում են հետևյալ փաստաթղթերը՝

1. Հայտատուի հավաստագրեր

- Լրացրեք և վերբեռնեք Հայտատուի հավաստագրերը, որոնք կիրառելի են **միայն** ձեր բիզնեսի/կազմակերպության համար:

2. Կառավարության կողմից տրված լուսանկարով ընդունելի ID՝ վերբեռնված Persona-ի միջոցով, որը ներառված կլինի դիմումում:

3. Պաշտոնական դիմում Կալիֆոռնիայի պետքարտուղարին (որը պետք է ակտիվ լինի) կամ տեղական համայնքապետարան, ըստ անհրաժեշտության, ձեր բիզնեսի կամ կազմակերպության մասին տեղեկություններով, օրինակ՝ հետևյալ փաստաթղթերից մեկով՝

- Ընկերության կանոնադրություն,
- Կազմակերպության վկայական,
- Կազմակերպության գրանցված ֆիկտիվ անվանում,
- Մասնագիտական գործունեությամբ զբաղվելու լիցենզիա,
- Կառավարության կողմից տրված բիզնեսի լիցենզիա կամ թույլտվություն

4. Հարկերից ազատման կարգավիճակի ապացույց (պահանջվում է միայն շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար)

5. 2022 թ. լրացված, անփոփոխ 7 ներկայացված դաշնային հարկային հայտարարագրեր կամ IRS ձև 990

6. Աշխատակիցների թվի ապացույց. 2022 թվականի IRS ձև W-3 կամ աշխատավարձի հաշվետվություններ

Այս ցանկը սպառնիչ չէ: Lendistry-ն կարող է կապ հաստատել ձեզ հետ Էլեկտրոնային փոստով, հեռախոսով և/կամ տեքստային հաղորդագրությամբ (թույլտվության առկայության դեպքում)՝ պահանջելու լրացուցիչ փաստաթղթեր՝ ձեր դիմումում ներկայացված տեղեկությունները ստուգելու համար:

Ինչպես լրացնել Հայտատուի հավաստագրերը



CALIFORNIA

Small Agricultural Business
Drought and Flood Relief Grant

APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

Հայտատուի հավաստագրեր

Որպես դիմումի գործընթացի մաս, ձեզանից կպահանջվի վեբ դիմումում և օժանդակ փաստաթղթերում հաստատել ձեր տրամադրած տեղեկատվության ճշմարտացիությունն ու ճշգրտությունը՝ ստորագրելով Հայտատուի հավաստագրերը:

Հայտատուի հավաստագրերը հասանելի կլինեն Էլեկտրոնային ձևով, որպեսզի դուք դրանք ներբեռնեք և լրացնեք: Հայտատուի ստորագրած հավաստագրերը պարտադիր փաստաթղթեր են այս դրամաշնորհային ծրագրի գործընթացում և պետք է վերբեռնվեն պորտալում PDF ձևաչափով:

Ներբեռնեք Հայտատուի հավաստագրերը և պահպանեք \$այլը ձեր սարքում: Դուք կարող եք լրացնել Հայտատուի հավաստագրերը Էլեկտրոնային եղանակով կամ տպել \$այլը և ձեռքով լրացնել:

ԿԱՐԵՎՈՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ. Համոզվեք, որ հայտատուի ճիշտ հավաստագրերն են լրացնում տվյալ **խմբի** (երաշտից տուժածների 1-ին խումբ, երաշտից տուժածների 2-րդ խումբ կամ հեղեղումներից տուժածների 1-ին խումբ) և **բիզնեսի տեսակի** համար (շահույթ հետապնդող բիզնես կամ շահույթ չհետապնդող կազմակերպություն), որի համար դիմում եք: Հայտատուի սխալ հավաստագրի վերբեռնման դեպքում ձեր դիմումի քննարկման գործընթացը կհետաձգվի:

ԵՐԱՇՏԻՑ ՏՈՒԺԱԾՆԵՐԻ 1-ԻՆ ԽՈՒՄԲ

Շահույթ հետապնդող բիզնես. [ՍԵՂՄԵՔ ԱՅՍՏԵՂ ՆԵՐԲԵՐՆԵՂՈՒ ԿԱՎԱԿԵՐԱԿՈՒՄ](#) Շահույթ չհետապնդող կազմակերպություն. [ՍԵՂՄԵՔ ԱՅՍՏԵՂ ՆԵՐԲԵՐՆԵՂՈՒ ԿԱՎԱԿԵՐԱԿՈՒՄ](#)

ԵՐԱՇՏԻՑ ՏՈՒԺԱԾՆԵՐԻ 2-ՐԴ ԽՈՒՄԲ

Շահույթ հետապնդող բիզնես. [ՍԵՂՄԵՔ ԱՅՍՏԵՂ ՆԵՐԲԵՐՆԵՂՈՒ ԿԱՎԱԿԵՐԱԿՈՒՄ](#) Շահույթ չհետապնդող կազմակերպություն. [ՍԵՂՄԵՔ ԱՅՍՏԵՂ ՆԵՐԲԵՐՆԵՂՈՒ ԿԱՎԱԿԵՐԱԿՈՒՄ](#)


ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻՑ ՏՈՒԺԱԾՆԵՐԻ 1-ԻՆ ԽՈՒՄԲ

Շահույթ հետապնդող բիզնես. [ՍԵՂՄԵՔ ԱՅՍՏԵՂ ՆԵՐԲԵՐՆԵՂՈՒ ԿԱՎԱԿԵՐԱԿՈՒՄ](#) Շահույթ չհետապնդող կազմակերպություն. [ՍԵՂՄԵՔ ԱՅՍՏԵՂ ՆԵՐԲԵՐՆԵՂՈՒ ԿԱՎԱԿԵՐԱԿՈՒՄ](#)

Ինչպես լրացնել Հայտատուի հավաստագրերն Էլեկտրոնային եղանակով


Քայլ 1

Սեղմեք ներքեռնման պանոկերակը՝ ներքեռնելու Հայտատուի հավաստագրերը և պահպանելու ֆայլը ձեր սարքում:




Քայլ 2

Գտեք Հայտատուի հավաստագրերը ձեր սարքում և բացեք ֆայլը: Հայտատուի հավաստագրերը կբացվեն PDF ձևաչափով:



Քայլ 3

Լրացրեք Հայտատուի հավաստագրերը՝ մուտքագրելով ձեր անվան սկզբնատառերը համարակալված նիշերի կողքին, ավելացրեք ձեր ստորագրությունը և մուտքագրեք բիզնեսի տվյալները վերջին էջում:



Քայլ 4

Հայտատուի հավաստագրերը լրացնելուց հետո կրկին պահպանեք ֆայլը՝ անցնելով ֆայլ > Պահպանել կամ ստեղնաշարի վրա սեղմելով CTRL+S:


Քայլ 5

Վերքեռնեք լրացված Հայտատուի հավաստագրերը Lendistry-ի պորտալում PDF ձևաչափով:

Ինչպես լրացնել Հայտատուի հավաստագրերը ձեռքով

Քայլ 1

Տպեք Հայտատուի հավաստագրերը՝ սեղմելով տպիչի պատկերակոչիչը ընդգծված է ստորև կարմիր վանդակում:



Քայլ 2

Լրացրեք Հայտատուի հավաստագրերը ընթեռնելի ձեռնագրով՝ մուգ գույնի գրիչով:

Քայլ 3

Սկանավորեք լրացված Հայտատուի հավաստագրերը և պահպանեք ֆայլը ձեր սարքում PDF ձևաչափով:

Քայլ 4

Վերբեռնեք լրացված Հայտատուի հավաստագրերը Lendistry-ի պորտալում PDF ձևաչափով:

Դիմումը ներկայացնելու խորհուրդներ



CALIFORNIA

Small Agricultural Business
Drought and Flood Relief Grant

APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

Խորհուրդ #1. Օգտվեք Google Chrome-ից

Լավ աշխատանքի համար օգտվեք Google Chrome-ից դիմումի ներկայացման ամբողջ գործընթացի ընթացքում:

Այլ վեբ զննարկիչներ կարող են չաջակցել մեր ինտերֆեյսը և սխալներ թույլ տալ ձեր դիմումում:

Եթե դուք չունեք Google Chrome ձեր սարքում, կարող եք այն անվճար ներբեռնել այստեղից՝ <https://www.google.com/chrome/>:

Նախքան դիմումին անցնելը՝ ինդրում ենք կատարել հետևյալ գործողությունները Google Chrome-ում.

1. **Մաքրեք ձեր քեշ (գերօպերատիվ) հիշողությունը**
2. **Օգտագործեք ինկոգնիտո ռեժիմը**
3. **Ապաակտիվացրեք բացվող պատուհանների արգելափակիչը**

Մաքրեք ձեր քեշ հիշողությունը

Քեշ հիշողության մեջ պարունակվող տվյալներն այն տեղեկություններն են, որոնք պահպանվել են վեբկայքից կամ հավելվածից և հիմնականում օգտագործվում են զննման գործընթացն ավելի արագ դարձնելու համար՝ տեղեկություններն ավտոմատ կերպով լրացնելով: Սակայն, քեշ հիշողության մեջ պարունակվող տվյալները կարող են ներառել նաև հնացած տեղեկություններ, օրինակ՝ հին գաղտնաբառեր կամ նախկինում սխալ մուտքագրված տեղեկություններ: Սա կարող է սխալների առաջացման պատճառ դառնալ ձեր դիմումում և կարող է հանգեցնել նրան, որ դիմումը հնարավոր խարդախության կասկած հարուցի:

Օգտագործեք ինկոգնիտո ռեժիմը

Ինկոգնիտո ռեժիմը թույլ է տալիս գաղտնի մուտքագրել ինֆորմացիան և թույլ չի տալիս, որպեսզի ձեր ինֆորմացիան հիշվի կամ պահպանվի քեշ հիշողությունում:

Ապաակտիվացրեք բացվող պատուհանների արգելափակիչը


Մեր դիմումաձևում կան բազմաթիվ բացվող պատուհաններով հաղորդագրություններ, որոնք կիրառվում են ձեր տրամադրած տեղեկատվության ճշգրտությունը հաստատելու համար: Այս հաղորդագրությունները տեսնելու համար դուք պետք է ապաակտիվացնեք բացվող պատուհանների արգելափակիչը Google Chrome-ում:

Շարունակությունը՝ հաջորդ էջում:

Ինչպես մաքրել բեշ (գերօպերատիվ) հիշողությունը


Քայլ 1

Բացեք Google Chrome-ի նոր պատուհան, սեղմեք վերևի աջ անկյունում գտնվող երեք կետերը և անցեք «Կարգավորումներ»:




Քայլ 2

Անցեք «Գաղտնիություն և անվտանգություն», այնուհետև ընտրեք «Մաքրել զննարկման տվյալները»:



Քայլ 3

Ընտրեք «Մաքրել տվյալները»:




Շարունակությունը՝ հաջորդ էջում:

Ինչպես օգտագործել ինկոգնիտո ռեժիմը


Քայլ 1

Սեղմեք ձեր վեբ գննարկիչի վերևի աջ անկյունում գտնվող երեք կետերը, այնուհետև ընտրեք «Նոր ինկոգնիտո պատուհան»:



Քայլ 2

Ձեր գննարկիչը կբացի Google Chrome-ի նոր պատուհան: Օգտագործեք ինկոգնիտո ռեժիմը՝ դիմումի լրացման ամբողջ գործընթացում:




Շարունակությունը՝ հաջորդ էջում:

Ինչպես ապաստիվացնել բացվող պատուհանների արգելափակիչը


Քայլ 1

Բացեք Google Chrome-ի նոր պատուհան, կտտացրեք վերևի աջ անկյունում գտնվող երեք կետերին և անցեք «Կարգավորումներ»:





Քայլ 2

Անցեք «Գաղտնիություն և անվտանգություն», այնուհետև ընտրեք «Կայքի կարգավորումներ»:



Քայլ 3

Ընտրեք «Բացվող պատուհաններ և վերահղումներ»: Սեղմեք կոճակը, որպեսզի այն կապույտ դառնա, և կարգավիճակը փոխվի՝ «Արգելափակվածից» դառնալով «Թույլատրված»:



Խորհուրդ #2. Ձեր փաստաթղթերը ներկայացրեք PDF ձևաչափով

Պահանջվող բոլոր փաստաթղթերը հարկավոր է վերբեռնել Պորտալում միայն PDF ձևաչափով: Վերբեռնելիս փաստաթղթերը պետք է լինեն պարզ, ուղիղ դիրքով և չպարունակեն խանգարող հետնապատկերներ:

Կարևոր դիտողություններ՝ փաստաթղթերի վերբեռնման հետ կապված.

1. Բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացվեն PDF ձևաչափով (Կառավարության կողմից տրված ինքնուրույնը հաստատող փաստաթուղթը կարող է ներկայացվել PDF կամ JPEG ձևաչափով):
2. Ֆայլի չափը պետք է լինի 15 ՄԲ-ից փոքր:
3. Ֆայլի անվան մեջ ՉԻ ԿԱՐՈՂ լինել որևէ հատուկ նիշ (!@#%\$%^&*()_+):
4. Եթե ձեր ֆայլը պաշտպանված է գաղտնաբառով, դուք պետք է մուտքագրեք այն:

Չունե՞ք սկաներ:

Խորհուրդ ենք տալիս ներբեռնել և օգտվել անվճար սկանավորման բջջային հավելվածից:

Genius սկանավորում

Apple | [Սեղմեք այստեղ ներբեռնելու համար](#)

Android | [Սեղմեք այստեղ ներբեռնելու համար](#)

Adobe սկանավորում

Apple | [Սեղմեք այստեղ ներբեռնելու համար](#)


Android | [Սեղմեք այստեղ ներբեռնելու համար](#)

Օրինակ՝ ճիշտ վերբեռնում




Փաստաթուղթը պետք է հստակ երևա, լինի ուղիղ դիրքով:

Օրինակ՝ Միսալ վերբեռնում



1



2

1. Փաստաթուղթը ուղիղ դիրքով չէ:
2. Փաստաթուղթը պահել են պատուհանի դիմաց (շեղող ֆոն), և լուսանկարում ձեռք է երևում:

Խորհուրդ #3. Նշեք վավեր Էլփոստի հասցե

Չամոզվեք, որ վավեր Էլփոստի հասցե եք նշել, քան որ այն ճիշտ է գրված դիմումում:

- Ձեր դիմումի հետ կապված թարմացումները և լրացուցիչ ուղեցույցները կուղարկվեն ձեր տրամադրած Էլփոստի հասցեին:
- Էլփոստի որոշ հասցեներ չեն կարող ճանաչվել Lendistry-ի համակարգի կողմից, ինչը կարող է հանգեցնել ձեր դիմումի հետ կապված հաղորդակցության ուշացումներին: Անվավեր Էլփոստի հասցեների օրինակների համար տե՛ս աջ կողմում գտնվող ցանկը:

Եթե ձեր դիմումում նշել եք սխալ կամ անվավեր Էլփոստի հասցե, կապ հաստատեք մեր Չաճախորդների սպասարկման կենտրոնի հետ՝ 1-888- 209-3656 հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ (7:00-ից մինչ 19:00 PT)՝ ձեր տվյալները թարմացնելու համար:

Նոր դիմում ՄԻ՝ ներկայացրեք: Մի քանի դիմում ներկայացնելը կարող է դիտվել որպես հնարավոր խարդախություն և խաթարել ձեր դիմումի քննման գործընթացը:

Անվավեր Էլփոստի հասցեներ

Չետևյալ Էլփոստի հասցեները մեր համակարգով չեն ընդունվի կամ ճանաչվի՝

Էլփոստի հասցեներ, որոնք սկսվում են **info@-ով**

Օրինակ՝ info@mycompany.com

Էլփոստի հասցեներ, որոնք վերջանում են **@contact.com-ով** կամ **@noreply.com-ով**

Օրինակ՝ mycompany@contact.com

Օրինակ՝ mycompany@noreply.com

խորհուրդ #4. Հետևեք Persona-ով հաջողությամբ ինքնության ստուգումն անցնելու խորհուրդներին

Ի՞նչ է իրենից ներկայացնում Persona-ն

Persona-ն երրորդ կողմի հարթակ է, որից օգտվում է Lendistry-ն՝ խարդախության կանխարգելման և դրա հետևանքների մեղմացման համար: Persona հարթակը Lendistry-ին հնարավորություն է տալիս ստուգել անձի ինքնությունը և պաշտպանել այն կեղծելուց՝ անձի ինքնանկարն ավտոմատ կերպով համեմատելով նրա ID-ի դիմանկարի հետ՝ 3-կետանոց կոմպոզիտային և կենսաչափական տվյալների իսկության ստուգում կատարելով:

- Հայտատուները պետք է հաստատեն իրենց ինքնությունը Persona-ի միջոցով՝ վերբեռնելով կառավարության կողմից տրված վավեր անձը հաստատող փաստաթղթի (ID) լուսանկարը:
- Հայտատուները պետք է նաև ինքնանկար անեն՝ օգտագործելով դիմահայաց դիրքով տեսախցիկով սարք՝ Persona-ով ստուգումն անցնելու համար:

Persona-ի հետ կապված լրացուցիչ օգնության համար այցելեք <https://help.withpersona.com/for-end-users/>:

Persona-ով հաջողությամբ ինքնության ստուգումն անցնելու խորհուրդներ



1. Օգտագործեք դիմահայաց դիրքով լուսանկարող սարք: Եթե դուք աշխատում եք հավելվածում՝ նոտաբեռնելով կամ համակարգչով, որը չունի տեսախցիկ, ձեզ կառաջարկվի տարբերակ ցանկացած պահի անցնել ստուգումը Persona-ով շարժական սարքով՝ սեղմելով «Շարունակել մեկ այլ սարքով» և սկանավորելով տրամադրված QR կոդը կամ խնդրելով հղում ուղարկել SMS-ով կամ էլփոստով:
 - Երբ անցնեք ստուգումը Persona-ով ձեր շարժական սարքով, դուք ավտոմատ կերպով կվերահղվեք ձեր հավելվածը՝ ձեր նոտաբեռնելով կամ համակարգչով:
2. *Նախքան* Persona-ն գործարկելը՝ լուսանկարեք կառավարության կողմից տրված ձեր ID-ի երեսակողմն ու դարձերեսը և պահեք լուսանկարներն այն սարքում, որով պետք է ինքնանկար անեք:
 - Դրեք կառավարության կողմից տրված անձը հաստատող փաստաթուղթը հարթ սպիտակ մակերեսին և ապահովեք համապատասխան լուսավորություն:
 - Մի՛ օգտագործեք ֆլեշ, քանի որ այն կարող է ցուլքեր առաջացնել:
3. Ինքնանկար անելիս ապահովեք բավարար լուսավորություն՝ ձեր դեմքին ուղղված՝ խուսափելով հետևից վառ լույսի աղբյուրներից:
 - Կանգնեք դատարկ պատի կամ դռան առջև և խուսափեք շեղող ֆոնից:
 - Մի՛ օգտագործեք ֆլեշ, քանի որ այն կարող է ցուլքեր առաջացնել:

Շարունակությունը՝ հաջորդ էջում:

Խորհուրդ #4. Յետևեք Persona-ով հաջողությամբ ինքնության ստուգումն անցնելու խորհուրդներին



Քայլ 1

Սեղմեք «**Սկսել ստուգումը**», այնուհետև ընտրեք կառավարության կողմից տրված ID-ի այն տեսակը, որը ցանկանում եք օգտագործել՝ ձեր ինքնությունը հաստատելու համար:



Քայլ 2

Լուսանկարեք կամ վերբեռնեք ձեր ID-ի լուսանկարի **էնթասկոտը**: Շարունակելու համար ընտրեք «Օգտագործել այս \$այլը»: Տե՛ս [30-րդ էջը](#)՝ այս քայլը կատարելու լավագույն փորձի համար:





Շարունակությունը՝ հաջորդ էջում:

Խորհուրդ #4. Յետևեք Persona-ով հաջողությամբ ինքնության ստուգումն անցնելու խորհուրդներին



Քայլ 3

Լուսանկարեք կամ վերբեռնեք ձեր ID-ի լուսանկարի **դարձերեսը**: Շարունակելու համար ընտրեք «Օգտագործել այս ֆայլը»: Տե՛ս [30-րդ էջը](#)՝ այս քայլը կատարելու լավագույն փորձի համար:



Քայլ 4

Եթե օգտագործում եք **դիմահայաց դիոքոլ** տեսախցիկով սարք, հետևեք Էկրանի հուշումներին ինքնանկար անելու համար՝ նայելով առաջ, ձախ և հետո աջ: Տե՛ս [30-րդ էջը](#)՝ այս քայլը կատարելու լավագույն փորձի համար: Ավարտելուց հետո ընտրեք «Կատարված» և կվերահղվեք դեպի դիմումը:



Խորհուրդ #5. Ընտրեք ձեր անվտանգության հարցերը Lendistry-ի պորտալում

Ծրագրի համար Lendistry-ի պորտալն ունի հատուկ ֆունկցիա, որը ձեզ թույլ է տալիս ընտրել մի շարք անվտանգության հարցեր՝ պաշտպանելու և թույլ տալու համար ապակողպել ձեր հաշիվը՝ այն մուտք գործելու չափազանց շատ անհաջող փորձերի դեպքում:

Անվտանգության հարցերը նախատեսված են կանխելու համար ձեր պորտալի հաշիվ չթույլատրված մուտքը: Դուք կարող եք ընտրել ցանկացած հարց, որը հասանելի է բացվող ընտրացանկում, սակայն, մենք **խստորեն** խորհուրդ ենք տալիս ընտրել այնպիսի հարցեր, որոնց պատասխաններն անձնական են կամ որոնք միայն դուք գիտեք:

Գրանցեք ձեր անվտանգության հարցերի պատասխանները: Դրանք մեծատառերի նկատմամբ զգայուն են, և ձեր հաշիվն ապակողպելիս պետք է մուտքագրեք դրանք ճիշտ այնպես, ինչպես գրանցել եք:

Վերանայեք [74-78 էջերը](#)՝ հաշվի հետ կապված խնդիրների վերացման կամ ապակողպման հրահանգների համար:

Ինչպես բացել դիմում



CALIFORNIA

Small Agricultural Business
Drought and Flood Relief Grant

APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY


Որտեղ դիմել

Դուք կարող եք բացել դիմում՝ այցելելով ծրագրի կայքը հետևյալ հասցեով՝ www.cadroughtfloodrelief.com:

1. Նոր դիմում բացելու համար ընտրացանկում ընտրեք «**Դիմել**»։ Դուք կվերահղվեք դեպի Lendistry-ի դիմումների պորտալ:
2. Դուք ցանկացած ժամանակ կկարողանաք մուտք գործել և կառավարել ձեր դիմումը՝ սեղմելով «**Lendistry-ի պորտալ**»:

Ծրագրի կայքն ունի նաև տարբեր ռեսուրսներ, որոնք կուղղորդեն ձեզ դիմումի լրացման ամբողջ գործընթացում: Ռեսուրսները ներառում են՝


- Ծրագրի ուղեցույցներ
- Ծրագրի և ծրագրին դիմելու ուղեցույց
- Հայտատուի հավաստագրերի ներբեռնում
- Հաճախորդների սպասարկման կենտրոնի հեռախոսահամարը և աշխատանքային ժամերը
- Հաճախակի տրվող հարցեր
- Դիմումը ներկայացնելու խորհուրդներ



Lendistry-ի պորտալ

1. Դիմում բացելու համար հարկավոր է «**Բացել նոր հաշիվ**»:
2. Գրանցեք այն կազմակերպության սեփականատիրոջ կողմից օգտագործվող հիմնական էլփոստի հասցեն, որի համար դիմում եք: Այստեղ դուք կստանաք կարևոր տեղեկություններ և թարմացված տեղեկատվություն ձեր դիմումի վերաբերյալ:
3. Lendistry-ի պորտալ մուտք գործելու համար անհրաժեշտ է բազմագործոն նույնականացում: Ամեն անգամ մուտք գործելիս, ձեր գրանցած շարժական հեռախոսին կուղարկվի հաստատման կոդ: Դուք պետք է մուտքագրեք այս կոդը՝ պորտալի ձեր հաշիվ մուտք գործելու համար:
4. Դուք կարող եք ցանկացած ժամանակ հասանելիություն ստանալ ձեր դիմումին՝ ստեղծելով «**Մուտք գործել գոյություն ունեցող հաշիվ**»: Մուտք գործելուց հետո կտեսնեք ձեր դիմումի կարգավիճակը:

Եթե ձեզ անհրաժեշտ է օգնություն՝ պորտալի հաշիվ ստեղծելու կամ պորտալի ձեր հաշիվ մուտք գործելու հետ կապված, կապ հաստատեք Lendistry-ի Հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ՝ 1-888-209-3656 հեռախոսահամարով, երկուշաբթիից ուրբաթ (ժամը 7:00-ից մինչև 19:00 PT):



2

Գրանցեք ձեր էլփոստի հասցեն և հեռախոսահամարը:

3

Մուտքագրեք հաստատման կոդը:

Դիմումի ներկայացման գործընթաց. Երաշտից տուժածների 1-ին խումբ



CALIFORNIA

Small Agricultural Business
Drought and Flood Relief Grant

APPLICATION PORTAL POWERED BY LENDISTRY

Բաժին 1. Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի տվյալներ

Մեզ անհրաժեշտ են տեղեկություններ՝ ձեր բիզնեսի սեփականատիրոջ կամ ձեր շահույթ չիտապնդող կազմակերպության պաշտոնական ներկայացուցչի/լիազորված ստորագրողի մասին:

- Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի անուն
- Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի ազգանուն
- Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի ծննդյան ամսաթիվ
- Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի էլփոստի հասցե
- Պաշտոն/դիրք
- Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի բնակության հասցեի 1-ին տող (փոստային կոդը չնշել)
- Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի բնակության հասցեի 2-րդ տող (փոստային կոդը չնշել)
- Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի բնակության քաղաք
- Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի բնակության նահանգ
- Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի բնակության փոստային ինդեքս
- Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի սոցիալական ապահովության կամ հարկ վճարողի անհատական նույնականացման համար (SSN կամ ITIN)¹
- Սեփականության տոկոսը (%)
- Ուղղորդող գործընկեր²
- Սեփականատիրոջ/պաշտոնական ներկայացուցչի նախընտրելի հեռախոսահամար
- SMS-ի/տեքստային հաղորդագրության հետ կապված քաղաքականություն³

